ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ք.Գյումրի «20» դեկտեմբերի 2025թ.

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի գլխավոր քարտուղարի Ա.Աբրահամյանի, որը գործում է մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Սպառող), մի կողմից, և «Հայաստանի Էլ ցանցեր» ՓԲԸ «Ղարս» մասնաճյուղ «Գյումրի» Էլ ցանցեր, որը գործում է համաձայն իրեն տրամադրած գործունեության թիվ 0092 լիցենզիայի այսուհետ՝ «Մատակարար», ի դեմս տնօրեն Գ.Ֆարզադյանի մյուս կողմից, հիմք ընդունելով 2018 թվականի մայիսի 5-ին կնքված N:6120135 էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի այսուհետ պայմանագիր «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» թիվ ՀՀ ՇՄ ՀՄԱ-ԱՊՁԲ-18/1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 42-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Մատակարարը պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Սպառողին մատակարարել սույն Համաձայնագրի հավելվածով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Սպառողը պարտավորում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Սույն համաձայնագիրը գործում է 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում ծառայության մատուցման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ Ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16 ՀՀ ֆինանսների նախարարության գանձարանային վարչություն Հ/Հ 900211205027 ՀՎՀՀ 05558305 _____ (ստորագրություն) Կ.Տ	«ՀԷՑ» ՓԲԸ «ՂԱՐՍ» Մ/Ճ «ԳՅՈՒՄՐԻ» ԷԼ ՑԱՆՑ Ք.Գյումրի, Լ.Մադոյան 43 «Արդշինբանկ» ՓԲԸ Հ/Հ 2474663153865490 ՀՎՀՀ 01520882 _____ (ստորագրություն) Կ.Տ